ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 17 ՆԻՍՏԻ

ք.Երևան 08.07.2025թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) արտահերթ նիստն անցկացվեց առկա եղանակով ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Երեւան, Ալ.Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ):

Նիստին ներկա էին 20 անդամներից 14-ը:

Հասմիկ Ավագյանը - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ,Հոգաբարձուների խորհրդի նախագահ

Արսեն Միխայլով - ՀՀ վարչապետի օգնական

Սերգեյ Աբրահամյան- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ

Արսեն Հակոբյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության պետ

Հարություն Յավրյան - ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ

Աշոտ Տիրացույան - ՀՖԿՍՊԻ-ի ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս

Եկատերինա Նահապետյան- ՀՖԿՍՊԻ-ի ֆիզիկական դաստիարակության տեսության,մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկակական կուլտուրայի դասախոս

Նարինե Մարե-Գասպարյան- ՀՖԿՍՊԻ-ի ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս

Անահիտ Բարսեղյան- ՀՖԿՍՊԻ-ի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Լաուրա Միրզոյան- ՀՖԿՍՊԻ-ի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Հեղինե Սարկիսյան- ՀՖԿՍՊԻ-ի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Առցանց տարբերակով նիստին մասնակցել են՝

Ժիրայր Դավեյան- ՀՖԿՍՊԻ-ի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Սուրեն Եղիազարյան- ՀՖԿՍՊԻ-ի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Սուսան Ավետիսյան- ՀՖԿՍՊԻ-ի առողջարարական տեխնոլոգիաների և սպորտային տուրիզմի կառավարման ֆակուլտետի սովորող

Բացակայում էին՝

Գոհար Մամիկոնյան- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)

Սամվել Գևորգյան- Ն.Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն

Էդուարդ Քալանթարյան- Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան

Ռոբերտ Խաչատրյան- Հայաստանի ըմբշամրտի ֆեդերացիայի նախագահ

Դավիթ Մոսինյան- «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Լուսինե Տանաջյան- ՀՖԿՍՊԻ-ի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Օրակարգ

1. Օրակարգի հաստատում,

2. ՀՖԿՍՊԻ-ում իրականացված Աուդիտի արդյունքները հաստատելու մասին,

3. ՀՖԿՍՊԻ-ի հաստիքացուցակը հաստատելու մասին,

4. ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին հարցերը,

5. Հոգաբարձուների խորհրդում ՀՖԿՍՊԻ-ի ՊԴԱ կազմից ներկայացուցիչներ ներգրավելու ընթացակարգի վերաբերյալ:

6. Այլ հարցեր:

Օրակարգի 1-ին հարց.

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարց.

Զեկուցող՝ Տիգրան Սիմոնյան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը նշեց, որ նիստին ներկա է նաև ինստիտուտում աուդիտ իրականացրած անձը: Վերջինս մասնակցում է քննարկմանը՝ անհրաժեշտության դեպքում պարզաբանումներ ներկայացնելու նպատակով: Ռեկտորը ներկայացրեց Հիմնադրամի 2024 թվականի եկամուտների և ծախսերի հաստատված նախահաշվի և փաստացի կատարողականի վերլուծությունը: Ըստ ներկայացված տվյալների ինստիտուտի տարեկան ցուցանիշները կատարվել են 99 տոկոսով, ինչը վկայում է ֆինանսական ծրագրերի պատշաճ իրականացման մասին:

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը նաև նշեց, որ ծախսային հոդվածներով նախատեսված բոլոր վճարումները կատարվել են ըստ իրենց նպատակային նշանակության՝ համաձայն Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված որոշման: Նա ընդգծեց, որ ծախսային հոդվածների միջև փոխարինում կամ վերաուղղում չի իրականացվել, և յուրաքանչյուր ծախս կատարվել է միայն իր ուղիղ նշանակությամբ:

Դիտարկումներ.

Խորհրդի անդամ Սերգեյ Աբրահամյանը հարցով դիմեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ հետաքրքրվելով, թե արդյոք ներկայացվածը այն աուդիտն է, որը լրացուցիչ կերպով է պատվիրվել:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով Սերգեյ Աբրահամյանի հարցին, նշեց, որ ներկայացվածը ինստիտուտում իրականացված հերթական տարեկան աուդիտն է: Նա հավելեց, որ աուդիտի արդյունքները պետք է հաստատվեն Հոգաբարձուների խորհրդի կողմից և հրապարակվեն սահմանված կարգով:

Դիտարկումներ.

Խորհրդի անդամ Սերգեյ Աբրահամյանը հարցով դիմեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ նշելով, որ նախորդ աուդիտի եզրակացության մեջ ձևակերպումները եղել էին վերապահումներով: Նա հետաքրքրվեց՝ արդյոք ներկա աուդիտի եզրակացության մեջ ևս առկա են վերապահումներ, թե ոչ:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով Սերգեյ Աբրահամյանի հարցին, նշեց, որ ներկայացված աուդիտի եզրակացության մեջ ևս առկա են վերապահումներ, որոնք պայմանավորված են ինստիտուտում գույքագրման և գույքի վերագնահատման գործընթացների արդյունքների բացակայությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ այդ նույն խնդիրները արձանագրված չէն եղել նախորդ աուդիտի ժամանակ և ինստիտուտում բացակայել են նախկին գույքագրման վերաբերյալ փաստաթղթերը: Սակայն մեր ուսումնասիրության արդյունքում մինչ այս աուդիտի սկսելը նշված

գործընթացների իրականացման համար տրվել են համապատասխան հանձնարարականներ և ներկայումս նրանք ավարտական փուլում են:

Առաջարկներ.

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը առաջարկեց ինստիտուտում իրականացված աուդիտի արդյունքները հաստատելու մասին հարցը դնել քվեարկության:

Հարցը դրվեց քվեարկության.

Քվեարկության արդյունքները՝

Կողմ՝ 14

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Արդյունք՝ որոշվեց ընդունել ի գիտություն «ՀՖԿՍՊԻ»-ի հիմնադրամի 2024թ. տարեկան աուդիտի արդյունքները:

Օրակարգի 3-րդ հարց.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը նշեց, որ սովորաբար ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվում են միասին: Սակայն նախորդ նիստի ընթացքում հաստատվել էր միայն կառուցվածքը: Այդ պատճառով իր նախաձեռնությամբ հարցը ներառվել է օրակարգում, որպեսզի հաստատված կառուցվածքին համապատասխան ձևով հաստատվի նաև հաստիքացուցակը: Ռեկտորը հիշեցրեց, որ նախագծի նախնական տարբերակը խորհրդի անդամներն արդեն քննարկել են նախորդ նիստի ժամանակ: Նա ընդգծեց, որ հաստիքացուցակի հաստատումից հետո ինստիտուտը կկարողանա անցնել իր բնականոն գործունեությանը:

Դիտարկումներ.

Խորհրդի անդամ Սերգեյ Աբրահամյանը հարցով դիմեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ նշելով, որ ներկայացված հաստիքացուցակի մեջ կան որոշ կետեր, որոնք կարիք ունեն լրացուցիչ պարզաբանման: Մասնավորապես, նա մատնանշեց, որ «Որակի ապահովման և բարեփոխումների վարչությունը» ներառված է ընդամենը չորս հաստիքով, ինչը, իր խոսքով, առնվազն կասկածի տակ է դնում դրա որպես վարչություն ներկայացվելու հիմնավորվածությունը: Բացի այդ, նա նշեց, որ կան նաև մի շարք այլ հաստիքային միավորներ, որոնք չեն համապատասխանում համապատասխան ստորաբաժանումների անվանմանը կամ գործառույթներին:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով Սերգեյ Աբրահամյանի հարցադրմանը, նշեց, որ բակալավրիատի բաժնի լուծարման պատճառով դրա գործառույթները փոխանցվում են դեկանատներին: Նա ընդգծեց, որ դեկանատները այժմ ունեն բավարար աշխատանքային ներուժ այդ գործառույթները կատարելու համար և բաժնի նախկին աշխատակիցները կտեղափոխվեն դեկանատներ: Ռեկտորը հավելեց, որ հնարավոր է որոշ տարբերություններ առաջանան հետագա քննարկումների ժամանակ՝ կապված հաստիքների բաշխման հետ:

Դիտարկումներ.

Խորհրդի անդամ Սերգեյ Աբրահամյանը նշեց, որ երկուսն էլ ունեն կլասիկ

բաժինների կառուցվածք:

Խորհրդի անդամ Արսեն Հակոբյանը հանդես եկավ դիտարկմամբ՝ նշելով, որ նախորդ նիստի ժամանակ հաստատված կառուցվածքում համապատասխան ստորաբաժանումները ներկայացված էին որպես բաժիններ, մինչդեռ ներկայում ներկայացվում են որպես վարչություններ: Խորհրդի անդամ Արսեն Հակոբյանը հավելեց, որ 4-5 աշխատակից ունեցող ստորաբաժանումները չեն կարող հանդիսանալ վարչություններ, քանի որ այդպիսի կառուցվածքային միավորները ենթադրում են ավելի լայն կազմ և գործառույթներ:

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հարցով դիմեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ նշելով, որ հաստիքացուցակում «Որակի ապահովման և բարեփոխումների վարչություն»-ը ներկայացված է որպես վարչություն՝ չնայած այն ներառում է ընդամենը 4 աշխատակից: Նա հետաքրքրվեց, թե ինչով է պայմանավորված, որ «Կրթության էլեկտրոնային և տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման բաժինը», որը նույնպես ներառում է 4 աշխատակից, ներկայացված է որպես բաժին, մինչդեռ առաջին դեպքում նույն քանակով աշխատակիցներով միավորը ներկայացվում է որպես վարչություն:Նա խնդրեց ներկայացնել այդ կառուցվածքային տարբերակման հիմքերը:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանի հարցին, նշեց, որ կառուցվածքային միավորների անվանումների տարբերությունը պայմանավորված է ոչ միայն աշխատակիցների քանակով, այլև տվյալ ստորաբաժանումներին առաջիկայում վերապահվող աշխատանքային ծավալով: Նրա խոսքով՝ «Որակի ապահովման և բարեփոխումների վարչության» դեպքում կանխատեսվում է ավելի մեծ գործառնական ակտիվություն, ինչն էլ հիմք է ծառայել վարչություն կարգավիճակի սահմանման համար:

Դիտարկում.

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հայտնեց իր առարկությունը «Որակի ապահովման և բարեփոխումների վարչություն» կառուցվածքային միավորի

անվանման վերաբերյալ: Նա նշեց, որ չի համարում հիմնավորված այդ ստորաբաժանման «վարչություն» որակումը՝ հաշվի առնելով ներկայացված հաստիքների քանակը: Նա նաև հարց ուղղեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ պարզելու, թե արդյոք տվյալ դեպքում կարող է տեղի ունեցած լինել տեխնիկական բնույթի սխալ կամ վրիպում:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանի հարցին, նշեց, որ հաստիքացուցակի կազմման ժամանակ փորձ է արվել հնարավորինս սեղմել հաստիքները՝ ապահովելով կառուցվածքի արդյունավետությունը: Նա հավելեց, որ անհրաժեշտության դեպքում և համապատասխան հնարավորություն ունենալու պարագայում տվյալ վարչությունում կավելացնեն ևս մեկ աշխատակից:

Դիտարկումներ.

Խորհրդի անդամ Սերգեյ Աբրահամյանը հարցով դիմեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ նշելով, որ հիշում է, թե նախկինում քննարկման ժամանակ արձանագրվել էր, որ վարչական կազմի չափից մեծ լինելու պատճառով անհրաժեշտ է վերանայել հաստիքացուցակը: Նա ընդգծեց, որ այդ որոշման նպատակն էր վարչական մասում առկա ավելորդ հաստիքները հնարավորության դեպքում վերաուղղել ամբիոններին՝ դասախոսական կազմի համալրման համար: Ապա ճշտող հարցով դիմեց ռեկտորին՝ հարցնելով, թե արդյոք ճիշտ է հիշում այդ քննարկման բովանդակությունը:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով Սերգեյ Աբրահամյանի հարցին, նշեց, որ ինքը բոլոր քննարկումների ընթացքում մշտապես շեշտել է, որ ինստիտուտի վարչական և դասախոսական անձնակազմի թվաքանակը գրեթե հավասար է: Նա նշեց, որ առաջարկվող նոր հաստիքացուցակով նախատեսվում է 139 վարչական աշխատող, մինչդեռ նախորդ հաստիքացուցակով այդ թիվը եղել է 153: Այս փոփոխությամբ, ըստ ռեկտորի, քայլ է արվել վարչական մասի օպտիմալացման ուղղությամբ:

Դիտարկումներ.

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հարց ուղղեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ խնդրելով հստակեցնել, թե ներկայումս քանի վարչական աշխատող և քանի դասախոս է ընդգրկված ինստիտուտի կազմում: Նա նաև հետաքրքրվեց, թե առաջարկվող կրճատումից հետո ինչ փոփոխություն է սպասվում այս թվերի մեջ:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանի հարցին, նշեց, որ գործող հաստիքացուցակով ինստիտուտում նախատեսված է 153 վարչական աշխատող: Նա ընդգծեց, որ տվյալ պահին չի կարող ճշգրիտ նշել դասախոսական կազմի թվաքանակը, սակայն հավելեց, որ նոր փոփոխությունների արդյունքում վարչական աշխատողների թիվը կկրճատվի մինչև 139, իսկ հիմնական դասախոսների թիվը կհասնի 169-ի:

Դիտարկումներ.

Խորհրդի անդամ Արսեն Հակոբյանը կրկին ընդգծեց, որ նախորդ նիստի ընթացքում համապատասխան ստորաբաժանումը հաստատվել էր որպես բաժին, այլ ոչ թե վարչություն:

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հարցով դիմեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ նշելով, որ ըստ առաջարկվող հաստիքացուցակի յուրաքանչյուր դեկանի շուրջ նախատեսված է երեք աշխատակից: Նա խնդրեց հստակեցնել, թե ինչով է պայմանավորված նման կազմը, և արդյոք դա համարժեք է ինստիտուտի գործառույթներին ու իրական աշխատանքային բեռնվածությանը:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանի հարցին, նշեց, որ այն գործառույթները, որոնք մինչ այս իրականացնում էին բակալավրիատի բաժնի աշխատակիցները, ամբողջությամբ փոխանցվելու են դեկանատներին: Այդ փոփոխության արդյունքում դեկանատների աշխատանքային բեռնվածությունն էապես կաճի, ինչի պատճառով էլ անհրաժեշտ է յուրաքանչյուր դեկանի համար նախատեսել համապատասխան թվով աշխատակիցներ:

Դիտարկումներ.

Խորհրդի անդամ Նարինե Մարե-Գասպարյանը նշեց, որ բակալավրիատի բաժնի միավորումը դեկանատներին համարվում է ճիշտ և նպատակահարմար քայլ: Նա ընդգծեց, որ այս կերպ աշխատանքային գործընթացն ավելի արդյունավետ կդառնա, քանի որ դեկանների հետ միասին գործակցելը կազմակերպչական առումով կլինի ավելի հեշտ և համակարգված, քան առանձին բաժնի հետ:

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը նշեց, որ «Որակի ապահովման» ստորաբաժանման անվանման հարցում առկա է ձևակերպման խնդիր: Նրա խոսքով տվյալ միավորն անվանվել է որպես վարչություն, սակայն ըստ էության նման անվանումը իրավաչափ չէ, քանի որ վարչությունը պետք է ունենա առնվազն մեկ ենթակա բաժին: Նա հիշեցրեց, որ նախորդ նիստում նույն ստորաբաժանումը հաստատվել էր որպես բաժին:

Խորհրդի անդամ Սերգեյ Աբրահամյանը իր հերթին հավելեց, որ պետական կառավարման համակարգում «բաժնի» և «վարչության» միջև կա էական տարբերություն՝ այդ թվում նաև աշխատավարձային համակարգում: Նրա կարծիքով

թե՛ կառուցվածքով, թե՛ աշխատակիցների քանակով և թե՛ գործառույթներով, տվյալ ստորաբաժանումը լիովին համապատասխանում է բաժնի, այլ ոչ թե վարչություն սահմանմանը:

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հարց ուղղեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ հետաքրքրվելով, թե քանի հաստիք է ունեցել «Սպորտ Կաբ»- ը մինչև առաջարկվող փոփոխությունները:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը պատասխանեց խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանի հարցին՝ նշելով, որ «Սպորտ Կաբ»- ը ունեցել է 7 հաստիք, իսկ փոփոխությունից հետո նախատեսվում է 4 հաստիք:

Առաջարկներ.

Խորհրդի անդամ Հարություն Յավրյանը հանդես եկավ առաջարկությամբ՝ տվյալ հարցը հանել օրակարգից: Նա առաջարկեց, որպեսզի ռեկտոր Տիգրան Սիմոնյանը և խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը անցկացնեն խորհրդատվություն և միայն ընդհանուր համաձայնության հասնելուց հետո հարցը ներկայացվի առցանց ձևաչափով քննարկման և քվեարկության:

Դիտարկումներ.

Խորհրդի անդամ Արսեն Հակոբյանը հարց ուղղեց՝ հետաքրքրվելով, թե երբ քննարկվել են հաստիքացուցակի փոփոխությունները, արդյոք դրան զուգահեռ կայացվել են որոշումներ նաև դրույքաչափի վերաբերյալ:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով խորհրդի անդամ Արսեն Հակոբյանի հարցին, նշեց, որ հաստիքացուցակի փոփոխությունները իսկապես քննարկվել են, և դրան զուգահեռ բարձրաձայնվել է նաև դրույքաչափի վերաբերյալ հարցերը, որոնք այժմ քննարկման փուլում են:

Առաջարկներ

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը առաջարկեց ինստիտուտի հաստիքացուցակը հաստատելու մասին հարցը դնել քվեարկության, խորհրդի դիտարկումների հիման վրա փոփոխություն կատարելու պայմանով:

Հարցը դրվեց քվեարկության.

Քվեարկության արդյունքները՝

Կողմ – 14

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

Արդյունք՝ Հոգաբարձուների խորհուրդը հաստատեց ՀՖԿՍՊԻ-ի ներկայացված հաստիքացուցակը:

Օրակարգի 4-րդ հարց.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը հանդես եկավ առաջարկով՝ ընդգծելով, որ պետությունն ինստիտուտին հնարավորություն է տալիս դահլիճները տրամադրել վարձակալությամբ՝ որոշակի եկամուտներ ստանալու նպատակով: Սակայն, ինչպես նշեց ռեկտորը, այդ հնարավորությունից օգտվելը ներկայումս դժվարացված է, քանի որ ինստիտուտի կանոնադրության մեջ նման դրույթ առկա չէ: Նա առաջարկեց համապատասխան փոփոխություն կատարել ինստիտուտի կանոնադրության մեջ՝ այդ դրույթը ավելացնելու նպատակով:

Ռեկտոր Սիմոնյանը նաև ներկայացրեց, թե ինչ ակնկալիքներ ունի ինստիտուտը այս փոփոխությունից: Նա նշեց, որ կարճ ժամանակում դա հնարավորություն կտա ստեղծել հարմարավետ պայմաններ ուսանողների մասնագիտական պրակտիկաների անցկացման համար: Ներկայումս գործնական ուղղվածություն ունեցող ամբիոնների ուսանողները պրակտիկաները իրականացնում են տարբեր սպորտդպրոցներում, մինչդեռ դահլիճների օգտագործման միջոցով ինստիտուտը կկարողանա կազմակերպել սեփական պարապմունքային խմբեր և ուսանողները պրակտիկան կանցկացնեն հենց ինստիտուտում: Այդ կերպ ինստիտուտը նաև կխնայի ֆինանսական միջոցներ, որոնք ներկայումս ուղղվում են արտաքին հաստատություններին:

Դիտարկումներ.

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հարցով դիմեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ հետաքրքրվելով, թե տվյալ առաջարկի իրագործման դեպքում արդյոք կարող են առաջանալ հնարավոր ռիսկեր, և եթե այո՝ ինչպիսիք:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանի հարցին, նշեց, որ առաջարկվող գործողության մեջ որևէ ռիսկ ինքը չի տեսնում և այն համարում է լիովին իրագործելի ու վերահսկելի գործընթաց:

Դիտարկումներ.

Խորհրդի անդամ Արսեն Հակոբյանը հարցով դիմեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ պարզելու, արդյոք առաջարկվող բոլոր ծառայությունները (դահլիճների վարձակալություն և հարակից ակտիվություններ) նախատեսվում են գործարկել վճարովի հիմունքներով, թե ոչ: Նա նաև հետաքրքրվեց, թե ինչ ծրագրեր կան դասախոսական կազմի ներգրավման և այդ գործընթացից նրանց հնարավոր օգուտների վերաբերյալ:

Պատասխան.

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով խորհրդի անդամ Արսեն Հակոբյանի հարցին, նշեց, որ ինստիտուտի ուսանողների համար կազմակերպվող պարապմունքները լինելու են անվճար: Ինչ վերաբերում է դասախոսներին, ապա նա ընդգծեց, որ այն դասախոսները, ովքեր կհայտնեն ցանկություն խմբեր մարզելու, կկարողանան իրականացնել պարապմունքներ ինստիտուտի դահլիճներում և կստանան համապատասխան վարձատրություն:

Առաջակներ

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը առաջարկեց ինստիտուտի կանոնադրությունում փոփոխություն կատարելու հարցը դնել քվեարկության:

Հարցը դրվեց քվեարկության.

Քվեարկության արդյունքները՝

Կողմ՝ 14

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Արդյունք՝ Հոգաբարձուների խորհուրդը հաստատեց ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրության փոփոխությունը:

Օրակարգի 5-րդ հարց

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը անդրադարձավ նախորդ նիստի ընթացքում հնչած հարցադրումներից մեկին՝ հիշեցնելով, որ խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հանձնարարել էր պարզաբանել, թե ինչպես է ձևավորվել ներկա Հոգաբարձուների խորհուրդը և դասախոսական անձնակազմի ընդգրկման հիմքը:

Ռեկտորը նշեց, որ 2023 թվականի հունվարից սկսած խորհրդի չորս անդամներ հրաժարվել էին իրենց լիազորություններից, սակայն այդ ընթացքում որևէ գործողություն չէր ձեռնարկվել անդամների վերանշանակման ուղղությամբ: Իր նշանակման պահից՝ որպես ժամանակավոր պաշտոնակատար, նա արձանագրել է այս անհամապատասխանությունը և անմիջապես տեղեկացրել է Գիտական խորհրդին, Հոգաբարձուների խորհրդի նախագահին, ինչպես նաև կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

Ռեկտորը պարզաբանեց նոր անդամների ընտրության ընթացակարգը՝ նշելով, որ այն իրականացվում է օրենքով և ինստիտուտի կանոնադրությամբ նախատեսված համամասնության և թեկնածուների առաջադրման ու ընտրության կազմակերպման պահանջների պահպանմաբ, անհրաժեշտ էր ընտրել նոր ներկայացուցիչներ: Ընթացակարգը ներառել է հայտարարության հրապարակում, տեղեկացումներ

ամբիոններին, թեկնածուների առաջադրում ամբիոնների կողմից, թեկնածությունների ներկայացում ֆակուլտետներին, ապա՝ բուհին, և վերջապես՝ Գիտական խորհրդի կողմից քննարկում և ընտրություն: Այս ողջ գործընթացն իրականացվել է ըստ սահմանված կարգի:

Ինչ վերաբերում է Անահիտ Բարսեղյանի հետ կապված խնդրին, ռեկտոր Տիգրան Սիմոնյանը նշեց, որ նրա թեկնածությունը՝ ըստ տեղեկությունների, քննարկվել է ամբիոնում, սակայն ընտրության հարցը չի ընդգրկվել որևէ Գիտական խորհրդի օրակարգ, ավելին, հիշյալ ամբիոնը որևէ ֆակուլտետի ենթակայության տակ չէ, և նման դեպքերում թեկնածությունը ֆակուլտետի նիստով չի հաստատվում, սակայն պետք է հաստատվեր, ավելի ճիշտ ընտրվեր, գիտական խորհրդի կողմից:

Ռեկտորը հավելեց, որ ներկայիս Հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից՝ ինստիտուտի կողմից ներկայացված համապատասխան նամակի հիման վրա:

Ամփոփում.

Նիստի ավարտին խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը շնորհակալություն հայտնեց խորհրդի բոլոր անդամներին ակտիվ մասնակցության, բարձրացված հարցերի և բովանդակալից քննարկումների համար:

Հոգաբարձուների խորհրդի Նախագահ Հասմիկ Ավագյան

Քարտուղար Լաուրա Միրզոյան